



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

31.10.2024թ.

ՈՐՈՇՈՒՄ 1266-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ Գ. ԳԱԼՍՏՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 62/42 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՍ
ԿԱՌՈՒՑԱԾ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑՎԱԾ 33.3ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՈՒ 38.7ՔՄ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, 0.00388ՀԱ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԱԼՅՈՆԱ
ՎԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 2019 թվականի դեկտեմբերի 3-ի «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» թիվ 225-Ն ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2 կետով, 35-րդ կետի դ) ենթակետով, Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով Գորիս համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 15-ի թիվ 15-Ա որոշման դրույթները, և քննության առնելով Գորիս քաղաքի բնակիչ Այոնա Վանյանի 2023 թվականի դեկտեմբերի 27-ի դիմումը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Գորիս քաղաքի Գ. Գալստյան փողոցի թիվ 62/42 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման գոտում՝ Այոնա Վանյանի կողմից ինքնական կառուցված, օրինականացված և համայնքային սեփականություն գրանցված (վկ. N21102024-09-0019) 33.3քմ արտաքին /25.0քմ ներքին/ մակերեսով ավտոտնակը՝ (33.3x1209=40300) քառասուն հազար երեք հարյուր ՀՀ դրամով, 38.7քմ արտաքին /34.1քմ ներքին/ մակերեսով օժանդակ շինությունը (38.7x2418=93600) իննսուներեք հազար վեց հարյուր ՀՀ դրամով, և 0.00388հա մակերեսով սպասարկման հողատարածքը (38.8x1221=47400) քառասունյոթ հազար չորս հարյուր ՀՀ դրամով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարել Այոնա Վանյանին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

